ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ», «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

1.1. Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (այսուհետ՝ ԳՐԵԿՈ) «Գնահատման չորրորդ փուլ. կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի վերաբերյալ 2015 թվականի գնահատման զեկույցում անդրադարձ է կատարվել դատավորներին գաղտնի խորհրդատվության տրամադրման հնարավորության նախատեսմանը, մասնավորապես զեկույցում նշվում է, որ առկա է դատավորներին էթիկայի և վարքագծի կանոնների կիրառման և պահպանման վերաբերյալ գաղտնի խորհրդատվության տրամադրման անհրաժեշտություն, որը, կբարձրացնի նրանց իրազեկվածությունը՝ կանխելով շահերի բախումները և կոռուպցիոն ռիսկերը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային չափանիշները, որոնց համաձայն՝ «դատավորները պետք է հնարավորություն ունենան էթիկայի (ինչպես նաև վարքագծի կանոնների պահպանման) հարցերով խորհրդատվություն ստանալու համար դիմել դատական համակարգի որևէ մարմնի[1]»:

Զեկույցում նշվում է, որ ակնհայտ է, որ Հայաստանն ինքը պետք է որոշի այդպիսի խորհրդատվության տրամադրման եղանակը, որը կարող է իրականացվել օրինակ՝ ինչպես վերաքննություն իրականացնող դատարաններում՝ փորձառու դատավորների կողմից, այնպես էլ առանձին մարմնի կողմից: Այնուամենայնիվ, GRECO-ի գնահատման խումբը ընդգծել է, որ ցանկացած նման խորհրդատու/ խորհրդատվություն տրամադրող մարմին պետք է ունենա հատուկ փորձ այս ոլորտում և տարբերվի կարգապահական մարմիններից, ինչպիսիք ներկայումս կարող են դիտարկվել Բարձրագույն դատական խորհուրդը և Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել գաղտնի խորհրդատվության տրամադրումը:

[1] Տե՛ս, մասնավորապես Recommendation Rec(2010)12 of the Committee of Ministers of the Council of Europe to member States on judges: independence, efficiency and responsibilities, paragraph 74. See also Opinion No. 3 (2009) of the CCJE on the principles and rules governing judges' professional conduct, in particular ethics, incompatible behaviour and impartiality (paragraph 49): "it is desirable to establish in each *country one or more bodies or persons within the judiciary to advise judges confronted with a problem related* to professional ethics or compatibility of non-judicial activities with their status."

Խորհրդատվական հարցումները և համապատասխան մարմնի կողմից տրամադրված կարծիքները պետք է լինեն գաղտնի և առանց դատավորին նույնականացնելու հնարավորության նախատեսման ներկայացվեն այլ դատավորների քննարկմանը՝ հատուկ դասընթացների շրջանակներում: Ամփոփելով դատավորներին էթիկայի և վարքագծի կանոնների հարցերով գաղտնի խորհրդատվության տրամադրման հարցը՝ ԳՐԵԿՈ-ն ընդգծել է, որ, հաշվի առնելով այն, որ Հայաստանում կոռուպցիայի ընկալումը հատկապես բարձր է դատական համակարգի նկատմամբ և քաղաքացիների վստահությունը իշխանության այս ճյուղի նկատմամբ ցածր է, չափազանց կարևոր է, որ վերը նշված միջոցառումները ներառվեն կոռուպցիայի կանխարգելման վճռական և համապարփակ քաղաքականության մեջ[2]:

ԳՐԵԿՈ-ն իր «Գնահատման չորրորդ փուլ. Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի զեկույցի նախագծում վերահաստատել է իր կարծիքը և ևս մեկ անգամ ընդգծել, որ դատական համակարգի շրջանակներում պետք է լինի մի մարմին, որը գաղտնի խորհրդատվություն կտրամադրի դատավորներին[3]:

Դատավորներին էթիկայի և վարքագծի կանոնների վերաբերյալ գաղտնի խորհրդատվություն տրամադրելու նպատակն է ապահովել դատավորների կողմից էթիկայի և վարքագծի կանոնների պահպանումը: Գաղտնի խորհրդատվությունը դատավորների համար ծառայում է որպես ուղեցույցային նշանակություն ունեցող տեղեկատվության աղբյուր, որը տրվում է գործնականում էթիկայի կամ վարքագծի կանոնների կիրառման կապակցությամբ առաջացած իրադրությունների լուծման նպատակով:

Դատավորներին գաղտնի խորհրդատվություն տրամադրելու մի քանի հիմնական նպատակներն են՝

1. Անկողմնակալության ապահովումը.

Անաչառությունը դատավորների վարքագծի հիմնարար սկզբունքներից է:

Դատավորները պետք է յուրաքանչյուր գործին մոտենան անկողմնակալության սկզբունքը պահելով: Գաղտնի խորհրդատվությունը կարող է օգնել դատավորներին գնահատելու և կառավարելու այն իրավիճակները, որտեղ կարող են լինել ենթադրյալ կամ իրական կոնֆլիկտներ, որոնք վտանգում են նրանց անաչառությունը: Վարքագծի դրսևորման որոշակի ուղեցույց փնտրելով՝

---

[2] Տե՛ս, ԳՐԵԿՈ-ի «Գնահատման չորրորդ փուլ. կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի վերաբերյալ 2015 թվականի գնահատման զեկույցի 166-րդ կետը: https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad

[3] Տե՛ս, ԳՐԵԿՈ-ի «Գնահատման չորրորդ փուլ. կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի գնահատման զեկույցի 49-րդ կետը:

դատավորները կարող են տրամադրված խորհրդատվության հիման վրա ընտրել տվյալ իրավիճակում առավել արդյունավետ և դատավորի անկողմնակալությունը կասկածի տակ չդնող վարքագծի տարբերակը:

2. Դատավորների անկախության պաշտպանությունը.

Գաղտնի խորհրդատվությունը երաշխավորում է դատական իշխանության անկախությունը՝ ստեղծելով անվտանգ «տարածք», որտեղ դատավորները կարող են փնտրել խորհրդատվություն՝ առանց վախենալու ճնշումներից կամ արտաքին ազդեցությունից: Այն դատավորներին թույլ է տալիս ազատ քննարկել և ուսումնասիրել էթիկայի և վարքագծի կանոնների կիրառման կապակցությամբ առաջացող խնդիրները՝ նպաստելով զգայուն հարցերի շուրջ բաց երկխոսությանը՝ առանց վնասելու դատավորների անաչառության նկատմամբ հանրային ընկալմանը:

3. Մասնագիտական շարունակական զարգացման ապահովումը.

Գաղտնի խորհրդատվությունը նպաստում է դատավորների շարունակական մասնագիտական զարգացմանը: Այն դատավորներին հնարավորություն է տալիս անդրադառնալ իրենց որոշումների կայացման գործընթացներին, հետևություններ անել գործնականում առաջացած և իրենց լուծումը գտած էթիկայի և վարքագծի կանոնների կիրառման կապակցությամբ առաջացած խնդիրներից և բարելավել էթիկայի և վարքագծի կանոնների կիրառման և պահպանման վերաբերյալ իրենց պատկերացումները:

<u>Համեմատական փորձը դատավորներին էթիկայի և վարքագծի կանոնների վերաբերյալ տրամադրված գաղտնի խորհրդատվության վերաբերյալ.</u>

<u>1.Ավստրիա[4]</u>

Ավստրիայի դատավորների էթիկայի խորհուրդը, որը հայտնի է նաև որպես «Էթիկրատ», մարմին է, որը ստեղծվել է Ավստրիայի դատավորների ասոցիացիայի կողմից 2018 թվականին: Դրա հիմնական նպատակն է դատավորներին տրամադրել գաղտնի խորհրդատվություն և մշակել ուղեցույցներ՝ դատավորների էթիկայի և արժեքային հասկացությունների հետ կապված հարցերի վերաբերյալ:

Էթիկայի խորհուրդը կազմված է հինգ դատավորներից, որոնք ընտրվում են Ավստրիայի դատավորների ասոցիացիայի գլխավոր ասամբլեայի կողմից: Այս դատավորները ընտրվում են տարբեր դատարաններից՝ ապահովելով բոլոր ատյանների դատավորների ներկայացուցչությունը և բազմազանությունը խորհրդում:

[4] Serbia strengthening independence and accountability of the judiciary, final report with recommendations for a system of confidential counselling for judges and prosecutors on ethical matters, p.10

«Էթիկրատ»-ի հիմնական գործառույթը դատավորներին գաղտնի խորհրդատվություն տրամադրելն է: Ամեն անգամ, երբ դատավորը բախվում է էթիկայի կամ վարքագծի կանոնների կիրառման հարցում անորոշության, նա կարող է խորհրդատվություն համար դիմել Խորհրդին:

Դատավորները կարող են անմիջականորեն դիմել Էթիկայի Խորհրդին: Դիմելու եղանակների սահմանափակումներ չկան, այդ թվում կարող են դիմումները ներկայացվել նաև անանուն եղանակով: Դիմումը ստանալուց հետո խորհուրդը պետք է գնահատի և որոշի, թե արդյոք պետք է անդրադառնա ներկայացված հարցին թե ոչ:

Էթիկայի խորհուրդը իրավասու է էթիկայի և վարքագծի կանոնների հետ կապված հարցերով առաջարկություններ ներկայացնել նաև սեփական նախաձեռնությամբ: Այդ առաջարկությունները հասցեագրվում են Ավստրիայի դատավորների ասոցիացիայի խորհրդին: Խորհրդի առաջարկությունները կարող են ծառայել որպես ուղեցույց դատավորների համար:

Էթիկայի խորհրդի անդամներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են: Նրանք ենթակա չեն արտաքին ազդեցությունների, որոնք կարող են վտանգել նրանց անաչառությունը կամ բարեխղճությունը:

Կարևոր է նշել, որ չնայած Էթիկայի խորհուրդը տրամադրում է գաղտնի խորհրդատվություններ և առաջարկություններ, այն չունի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորություն: Էթիկայի խորհրդի դերը խորհրդատվական է և ուղղված է օգնելու դատավորներին՝ լուծելու էթիկայի և վարքագծի կանոնների կիրառման հետ կապված հարցերը և խրախուսելու էթիկայի և վարքագծի կանոնների պահպանումը դատական համակարգում:

2.Ալբանիա[5]

Ալբանիայում Բարձրագույն դատական խորհուրդը ստեղծել է համակարգ, որի շրջանակներում նշանակվում է էթիկայի հարցերով խորհրդական՝ էթիկայի հարցերով խորհրդատվություններ տրամադրելու համար:

Էթիկայի հարցերով խորհրդական կարող է լինել այն դատավորը, որը բավարարում է Բարձր դատարանի անդամ լինելու պահանջներին: Էթիկայի հարցերով խորհրդականը ընտրվում է էթիկայի հարցերում ունեցած փորձի և գիտելիքների հիման վրա, ինչը թույլ է տալիս նրան հիմնավոր առաջարկություններ ներկայացնել այլ դատավորներին:

[5]https://www.avokatipopullit.gov.al/media/manager/website/reports/LAW%20%20No.%201152016%20ON%20GOVERNANCE%20INSTITUTIONS%20OF%20THE%20JUSTICE%20SYSTEM.pdf

[5] https://euralius.eu/index.php/en/library/albanian-legislation?task=download.send&id=198&catid=86&m=0

Էթիկայի հարցերով խորհրդականը նշանակվում է հինգ տարի ժամկետով՝ մեկ անգամ կրկին նշանակվելու իրավունքով:

Բարձրագույն դատական խորհուրդը, ելնելով աշխատանքային կարիքներից, կարող է որոշում ընդունել, որ Էթիկայի հարցերով խորհրդականն աշխատելու է մշտական հիմունքներով:

Ալբանիայի «Արդարադատության կառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի համաձայն Էթիկայի հարցերով խորհրդականի լիազորություններն են.

ա) ցանկացած դատավորի խնդրանքով առաջարկություններ ներկայացնել դատարանում և դատարանից դուրս համապատասխան վարքագծի դրսևորման վերաբերյալ՝ էթիկայի (վարքագծի) կանոնների կիրառման անորոշությունների առաջացման դեպքում.

բ) պահանջել Բարձրագույն դատական խորհրդի կարծիքը որոշ հարցերի վերաբերյալ, որոնք վերաբերում են ընդհանուր առմամբ դատավորների վարքագծին, բայց ոչ կոնկրետ անձանց.

գ) միջազգային լավագույն չափանիշների, փորձի և Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան որոշումների հիման վրա մշակել, հրապարակել և մշտապես թարմացնել տեղեկատվական ձեռնարկները, որոնք արտացոլում են էթիկայի կանոնների կիրառմանը վերաբերող հարցերն ու պատասխանները.

դ) Արդարադատության ակադեմիայի հետ համագործակցությամբ ապահովել էթիկայի կանոնների պահպանման նախնական և շարունակական ուսուցումը.

ե) առնվազն տարին մեկ անգամ գրավոր զեկույց ներկայացնել Բարձրագույն դատական խորհրդին իր գործունեության վերաբերյալ:

Էթիկայի հարցերով խորհրդականը պարտավոր է պահպանել գաղտնիությունը՝ զերծ մնալով դատական համակարգի այն կառույցներին որևէ տեղեկություն հայտնելուց, որոնք ունեն ստուգումներ և գնահատումներ իրականացնելու իրավասություն:

Ալբանիայում չկան սահմանափակումներ Էթիկայի հարցերով խորհրդականին դիմելու հարցում: Դատավորները կարող են դիմել Էթիկայի հարցերով խորհրդականին տարբեր միջոցներով, ներառյալ անանուն ուղիներով, գրավոր ձևով, ինչպես նաև էլեկտրոնային հարթակների միջոցով: Այս մոտեցումը երաշխավորում է, որ դատավորները իրենց ավելի ազատ են զգում օգնություն հայցելու հարցում և կարող են դա անել առանց հետագայում իրենց համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու վախի:

Այպիսով, անանուն հաղորդակցության տարբերակը դատավորներին թույլ է տալիս բարձրացնել էթիկայի կանոնների կիրառության վերաբերյալ իրենց մտահոգությունները՝ առանց բացահայտելու իրենց ինքնությունը: Անանուն հաղորդակցության ուղիներ տրամադրելով՝

համակարգը նպաստում է գործընթացի թափանցիկությանը և խրախուսում է դատավորներին էթիկայի հարցերով խորհրդատվություն ստանալ՝ առանց բացասական հետևանքների վախի:

Հաղորդակցման բազմաթիվ ուղիների առկայությունը և անանուն լինելու հնարավորությունը ցույց են տալիս ալբանական դատական իշխանության հանձնառությունը՝ խթանելու էթիկայի և վարքագծի կանոնների պահպանմանն աջակցություն ցուցաբերելու միտումը: Այն խրախուսում է դատավորներին դիմել խորհրդատվական կարծիք ստանալու համար, պարզաբանել էթիկայի և վարքագծի կանոնների անորոշությունները և պահպանել պրոֆեսիոնալիզմի և անկախության ամենաբարձր չափանիշները դատական համակարգում:

3.Բուլղարիա[6]

Բուլղարիայում յուրաքանչյուր դատարանում ստեղծվում է էթիկայի հարցերով հանձնաժողով՝ տվյալ դատարանի ներսում էթիկայի և վարքագծի կանոնների կիրառման կապակցությամբ առաջացող հարցերը լուծելու համար:

Էթիկայի յուրաքանչյուր հանձնաժողով կազմված է երեք անդամից և այդ անդամները ընտրվում են տվյալ դատարանի դատավորների ընդհանուր ժողովի կողմից: Նրանք պաշտոնավարում են երկու տարի ժամկետով:

Այս հանձնաժողովները պրակտիկայում արդյունավետ չեն իրականացնում իրենց գործառույթները: Չնայած այն հանգամանքին, որ այդ խորհրդատվությունները դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք չեն՝ հանձնաժողովի անդամ դատավորները չեն ցանկանում քննադատել նույն դատարանի իրենց գործընկերներին՝ էթիկայի կամ վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ իրենց դիրքորոշումը հայտնելով:

4.Կանադա[7]

Կանադայի դատական էթիկայի խորհրդատվական կոմիտեն պատասխանատու է էթիկայի կանոնները կիրառելու հարցով երկընտրանքի առջև կանգնած դատավորներին գաղտնի խորհրդատվություն տրամադրելու համար:

[6] Serbia strengthening independence and accountability of the judiciary, final report with recommendations for a system of confidential counselling for judges and prosecutors on ethical matters, p.12

[7] Serbia strengthening independence and accountability of the judiciary, final report with recommendations for a system of confidential counselling for judges and prosecutors on ethical matters, p.12

Կանադայի դատական էթիկայի խորհրդատվական կոմիտեն ձևավորվում է «Առաջադրման հանձնաժողովի» կողմից, որը կազմված է Կանադայի դատական խորհրդի և Կանադայի Բարձրագույն դատարանի դատավորների ասոցիացիայի ներկայացուցիչներից:

Նրա հիմնական գործառույթն է էթիկայի կանոնների հարցերով օպերատիվ և գաղտնի խորհրդատվություն տրամադրել այն դատավորներին, ովքեր իրենց դատական գործառույթներն իրականացնելիս բախվում են դրանց կիրառման հետ կապված խնդիրներին:

Միջին հաշվարկով Կանադայի դատական էթիկայի խորհրդատվական կոմիտեն տարեկան տալիս է մոտ տասը խորհրդատվական եզրակացություն: Այս եզրակացությունները կազմվում են անանուն եղանակով և, ընդհանուր առմամբ, հասանելի են դաշնային բոլոր դատավորներին՝ «Judge.Net»-ում՝ դատավորների համար անվտանգ էլեկտրոնային հասցեում գտնվող ցանցում: Դրանք մատչելի չեն հանրության կամ ուսումնասիրողների համար:

5.Լիտվա[8]

Լիտվայում Դատական էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովը ինքնակառավարվող մարմին է, որը լուծում է դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական հարցերը և նպաստում է դատավորների կողմից էթիկայի կանոնների պահպանմանը:

Դատավորները, ինքնակառավարվող մարմինները և դատական հանձնաժողովները, ինչպես նաև դատավորներին միավորող հասարակական կազմակերպությունները կարող են դիմել Դատական էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին՝ խորհրդատվություն ստանալու համար՝ հարցումն ուղարկելով գրավոր կամ էլեկտրոնային եղանակով: Հարցման մեջ պետք է շարադրվեն դատավորի անձի կամ գործունեության հետ կապված այն հանգամանքները, որոնք կասկածներ են առաջացնում էթիկայի տեսանկյունից:

Դատական էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովը կազմված է յոթ անդամից: Հանձնաժողովի երկու անդամ նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից, մեկը՝ Սեյմի (խորհրդարանի) նախագահի, իսկ չորսը ՝ Դատական խորհրդի կողմից:

Դատական էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովը պետք է՝

- Դատական խորհրդին ներկայացնի և հրապարակի իր գործունեության տարեկան հաշվետվությունը,

[8] Serbia strengthening independence and accountability of the judiciary, final report with recommendations for a system of confidential counselling for judges and prosecutors on ethical matters, p.18

- պարբերաբար, առնվազն եռամսյակը մեկ անգամ, դատարանների համար պատրաստի ամփոփ տեղեկագիր՝ տրամադրված որոշումների և խորհրդատվությունների մասին հակիրճ տեղեկատվությամբ:

6.Լատվիա[9]

Լատվիայի «Դատական իշխանության մասին» օրենքի 14.1-րդ գլխի համաձայն՝ Դատական էթիկայի հանձնաժողովը դատական ինքնակառավարման կոլեգիալ մարմին է, որի հիմնական նպատակն է էթիկայի կանոնների մեկնաբանումը, խախտումների վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը, ինչպես նաև դատավորներին էթիկայի կանոնների պարզաբանումը:

Համաձայն Դատական էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգի՝ հանձնաժողովը քննում է կոնկրետ դատավորների կողմից ներկայացված էթիկայի կանոնների կիրառման հետ կապված հարցերը, ինչպես նաև դատավորի կամ դատական էթիկայի հանձնաժողովի անդամի պահանջով պարզաբանում է Դատական էթիկայի լատվիական օրենսգրքի 20 նորմեր:

Դատական էթիկայի հանձնաժողովը կազմված է տասն անդամից, որոնք ընտրվում են դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ: Դատական էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետը չորս տարի է: Նա կարող է կրկին ընտրվել, սակայն ոչ ավելի, քան երկու անգամ:

Դատական էթիկայի հանձնաժողովի գործառույթներն են.

1) կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեցող անձի դիմումով, ինչպես նաև դատավորների կարգապահական խորհրդի կամ կարգապահական դատարանի պահանջով՝ էթիկայի նորմերի մեկնաբանման և խախտումների վերաբերյալ կարծիքներ հայտնելը.

2) սեփական նախաձեռնությամբ կամ դատավորների պահանջով բացատրել և վերլուծել դատավորների էթիկայի կանոնագրքի նորմերը, ինչպես նաև դատավորներին տրամադրել խորհրդատվություն դատավորների էթիկայի հարցերով:

3) էթիկայի նորմերի մեկնաբանման և կիրառման հետ կապված հետևություններն ու պարզաբանումները ամփոփելը և հրապարակման նախապատրաստելը,

4) էթիկայի կանոնների խախտումները քննարկելը,

5) դատավորների էթիկայի կանոնագրքի նորմերը մշակելը և դրանք դատավորների ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը,

6) կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում ընդունելը:

[9] Serbia strengthening independence and accountability of the judiciary, final report with recommendations for a system of confidential counselling for judges and prosecutors on ethical matters, p.19

Դատական էթիկայի հանձնաժողովը իր աշխատանքի մասին տարեկան հաշվետվություն է ներկայացնում Դատավորների ընդհանուր ժողովին:

Դատական էթիկայի հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունները և մեկնաբանությունները հրապարակվում են www.tiesas.lv կայքում:

7.Պարագվայ[10]

Պարագվայում էթիկայի և վարքագծի կանոնների հարցերով խորհրդատվություն տրամադրում է Դատական էթիկայի խորհրդատվական խորհուրդը, որը կազմված է առնվազն 15 տարի պաշտոնավարած երեք դատավորներից, առնվազն 20 տարվա աշխատանքային փորձառություն ունեցող իրավաբանից և առնվազն 15 տարի դատական էթիկա դասավանդած իրավագիտության պրոֆեսորից: Դատական էթիկայի խորհրդատվական խորհրդի անդամները նշանակվում են Գերագույն դատարանի կողմից:

Դատական էթիկայի խորհրդատվական խորհուրդը իրավասու է խորհրդատվական կարծիքներ տրամադրել դատավորների էթիկայի կանոնների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ներկայացված հարցումներին:

Այդպիսի հարցումներ կարող են ներկայացվել միայն Գերագույն դատարանի, Դատավորների ազգային ասոցիացիայի, դատավորների, դատավորների ընտրության, նշանակման և ազատման պատասխանատու մարմինների, էթիկայի դատարանի, Փաստաբանների պալատի, Դատարանի գործավարների ասոցիացիաների և պետական և մասնավոր իրավաբանական դպրոցների կողմից:

Դատական էթիկայի խորհրդատվական խորհուրդը կարող է նաև խորհրդատվական եզրակացություններ տալ առանց հարցման՝ դատական էթիկայի կանոնների նորմատիվ չափանիշների համակարգն աստիճանաբար կառուցելու նպատակով:

Դատական էթիկայի խորհրդատվական խորհուրդը պարտավոր է հրապարակել տրված բոլոր խորհրդատվական կարծիքները:

Խորհրդատվական կարծիքները հրապարակային են, սակայն դատավորների կողմից ներկայացված կոնկրետ հարցերի վերաբերյալ տրամադրված կարծիքները գաղտնի են, քանի դեռ հարցումը ներկայացրած դատավորը չի ընդունել կամ չի խնդրել հրապարակել այն:

Դատավորների կողմից ներկայացված խորհրդատվական կարծիքները և պարտադիր չեն Էթիկայի դատարանի համար: Էթիկայի դատարանի պահանջով տրված եզրակացությունները կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերով որոշում կայացնելիս որևէ ուժ

[10] Serbia strengthening independence and accountability of the judiciary, final report with recommendations for a system of confidential counselling for judges and prosecutors on ethical matters, p.21

չունեն և դրանց հիման վրա դատավորը չի կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել:

8.Ուկրաինա[11]

Ուկրաինայի դատավորների խորհրդի էթիկայի հանձնաժողովը զգալի դեր է խաղում դատավորներին վերաբերող էթիկական հարցերի լուծման գործում: Այս հանձնաժողովը պատասխանատու է էթիկայի հարցերի վերաբերյալ դատավորների հարցումների քննարկման և պատասխանների նախագծերի պատրաստման համար: Մշակված նախագծերը քննարկվում են դատավորների խորհրդի կողմից և ընդունված անհատական պատասխաններն ուղարկվում են հարցումը ներկայացրած դատավորներին: Կարևոր է նշել, որ այս անհատական հարցումներն ու պատասխանները չեն հրապարակվում:

Այնուամենայնիվ, դատավորների խորհուրդը պարբերաբար ամփոփում է ամենաքննարկված հարցերը և մշակում զեկույցներ, որոնք ծառայում են որպես ուղեցույց դատավորների համար: Այս որոշումները հրապարակվում են դատավորների խորհրդի կայքում՝ հասանելի դառնալով բոլոր դատավորներին:

1.2. Ներկայումս դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է 8 անդամներից, որոնցից ոչ դատավոր անդամների թիվը սահմանափակվում է 2-ով: Արդյունքում, սակայն, դատավոր անդամները, միևնույնն է, ունենում են գերակշիռ մասնակցություն հանձնաժողովի կազմում և դրա որոշումների կայացման ընթացքում: Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, որը ներկայացվել էր Դատական օրենսգրքի փոփոխությունների նախնական տարբերակի վերաբերյալ և որի համաձայն հանձնաժողովի կազմում նախատեսված էր երեք ոչ դատավոր անդամների ներգրավում, ինչը Վենետիկի հանձնաժողովը ողջունելի էր համարել՝ հանձնաժողովի գործունեությունը արտաքին վերահսկողության/դիտարկման համար առավել բաց դարձնելու տեսանկյունից[12]: Իր հերթին, 2017 թ.-ի հոկտեմբերին Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքում[13] Վենետիկի հանձնաժողովը ընդգծել է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում կորպորատիվ մոտեցում որդեգրելու ռիսկերը՝ առաջարկելով հանձնաժողովի կազմի հավասարակշռումը ոչ դատավոր անդամների

[11] Serbia strengthening independence and accountability of the judiciary, final report with recommendations for a system of confidential counselling for judges and prosecutors on ethical matters, p.21

[12] Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն համատեղ թիվ CDL-AD(2019)024 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2019)024-e հղումով:

[13] Վենետիկի հանձնաժողովի թիվ CDL-AD(2017)019 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)019-e հղումով:

ընդգրկման միջոցով:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է վերանայել դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հանձնաժողովում որոշումների կայացման գործընթացում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը:

1.3. Ներկայումս Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովներում որպես դատավոր չհանդիսացող անդամ են ընտրվում նաև գործող փաստաբանները:

Նշվածը խնդրահարույց է այնքանով, որ Դատավորների ընդհանուր ժողովը՝ իր հանձնաժողովներով հանդերձ, դատավորների ինքնակառավարման մարմին է, որի գործողությունները իրավական, այդ թվում՝ բացասական հետևանքներ են ունենում դատավորների համար: Այս առումով,գործող փաստաբանների ընդգրկումը Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում օբյեկտիվորեն կարող է ենթադրել շահերի բախման և սուբյեկտիվիզմի դրսևորման այլ հնարավոր ռիսկեր, քանի որ փաստաբանների գործունեությունն անմիջականորեն կապված է դատարանների հետ: Այսպես, գործնականում հաճախ են լինելու իրավիճակներ, երբ դատարանի կայացրած դատական ակտը «չի բավարարելու» փաստաբանի ակնկալիքները, ինչով պայմանավորված վերջինը սուբյեկտիվ տրամադրվածություն է ունենալու դատավորի նկատմամբ: Ըստ այդմ, օրինակ՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամը, որը զուգահեռ իրականացնում է նաև փաստաբանական գործունեություն, կարող է շահագրգռվածություն ունենալ կոնկրետ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում:

Վերոգրյալի համատեքստում նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է փաստաբանի՝ Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում որպես անդամ ընդգրկվելու դեպքում լիազորությունների ժամկետով սահմանափակել նրա՝ փաստաբանական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Ամփոփելով վերը ներկայացված միջազգային փորձի ուսումնասիրությունը կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

1.1 Քննարկված պետություններից մի քանիսում էթիկայի հարցերով խորհրդատվական մարմինը ձևավորվում է Բարձրագույն դատական խորհրդի կազմում, նրա կողմից կամ առընթեր, մյուսներում՝ Բարձրագույն դատական խորհրդից դուրս:

Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբը (ԳՐԵԿՈ) ուսումնասիրելով նշված հարցը, եկել է այն եզրահանգմանը, որ ավելի արդյունավետ և նախընտրելի տարբերակ է էթիկայի և վարքագծի կանոնների հարցերով խորհրդատվական կարծիքի

տրամադրումը վերապահել Բարձրագույն դատական խորհրդի կողմից չձևավորվող և կամ նրա կողմից չընտրվող անդամներից կազմված մարմնի:

Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատավորների գաղտնի խորհրդատվության տրամադրման հնարավորության նախատեսումը նպատակ ունի նրանց համար լինել օգտակար գործիք և զուգահեռ այն նաև կանխարգելիչ միջոց է՝ խուսափելու էթիկայի կամ վարքագծի կանոնների հնարավոր խախտումներից: Այս առումով, դատավորների գաղտնի խորհրդատվությունը պետք է կազմակերպվի այնպես, որ դատավորների մոտ նույնպես վստահություն ձևավորվի այս մարմնի նկատմամբ և վերջիններս կարողանան անկաշկանդ դիմել նրան:

Միաժամանակ՝ հարկ է ընդգծել, որ այս մարմինների կողմից ծավալած գործունեությունը նպատակ է հետապնդում հնարավորինս շատ դատավորների ներգրավել, որպեսզի վերջիններս գործնականում էթիկայի կամ վարքագծի կանոնների կիրառման հետ կապված խնդիրները բարձրաձայնելով նպաստեն դրանց պահպանմանը, և նվազեցնեն սխալ կամ ոչ ճիշտ կիրառման դեպքերը:

Ուստի, ուսումնասիրված փորձը թույլ է տալիս գալ այն հետևությանը, որ էթիկայի կամ վարքագծի կանոնների հարցերով գաղտնի խորհրդատվություն տրամադրող մարմինը ավելի նպատակահարմար է ձևավորել Բարձրագույն դատական խորհրդից դուրս:

1.2. Քննարկված պետություններից մի քանիսում էթիկայի կամ վարքագծի կանոնների հարցերով գաղտնի խորհրդատվություն տրամադրող մարմինները ձևավորվում են առավելապես դատավորներից, մյուս մասում խորհրդատվական մարմնում ներառվում են նաև որոշակի փորձառություն ունեցող իրավաբան գիտնականները: Միաժամանակ քննարկվեց օրինակ, երբ խորհրդատվությունը տրվում է ոչ թե կոլեգիալ մարմնի կողմից, այլ խորհրդականի:

Ներկայացված միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս գալ հետևության, որ նախընտրելի տարբերակներից է խորհրդատվական մարմինը ձևավորել կոլեգիալ մարմնի տեսքով, որի կազմում կլինեն ինչպես տարբեր ատյանների դատավորներ, այնպես էլ իրավաբան-գիտնականներ:

1.3. Ինչ վերաբերում է գաղտնիությանը, ապա քննարկված պետությունները պաշտպանում են խորհրդատվությունների գաղտնի լինելու մոտեցումը: Մասնավորապես, դատավորը իր ցանկությամբ կարող է ինչպես դիմել անանուն, այնպես էլ իր տվյալները նշելու եղանակով: Սակայն, հատկանշական է, որ այնուամենայնիվ տրամադրվող խորհրդատվությունը պետք է լինի գաղտնի: Այսինքն՝ այն բացի դատավորից այլ անձանց համար պետք է նույնականացնող տվյալներ

չպարունակի: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ դատավորը ինքն է տալիս իր համաձայնությունը դրանց նույնականացված տարբերակով հրապարակելու մասին:

1.4. Քննարկված պետություններից մի մասում խորհրդատվական մարմինները իրենց խորհրդատվական եզրակացությունները տրամադրում են անմիջապես դատավորին և հրապարակում կայքում, մի մասում առանձին խորհրդատվական կարծիքները չեն հրապարակվում, այլ դրանք ամփոփվում են տարեկան զեկուցագրում և հրապարակվում որպես ուղեցույց: Այսինքն՝ պետությունները առավելապես որդեգրել են ինչպես կոնկրետ գործով դատավորին խորհրդատվություն տրամադրելու, այնպես էլ մնացած դատավորներին իրազեկելու եղանակները:

1.5. Քննարկված պետություններից բոլորում այս մարմինների խորհրդատվական կարծիքները պարտադիր բնույթ չեն կրում և չեն կարող հիմք հանդիսանալ կարգապահական վարույթի հարուցման կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Այսինքն, դրանք առավելապես կրում են ուղեցուցային բնույթ և նպատակաուղղված են դատավորին օգնել ճիշտ կողմնորոշվել կոնկրետ իրավիճակում:

1.6. Խորհրդատվական մարմնի ինչպես դատավոր, այնպես էլ ոչ դատավոր անդամները խորհրդատվական մարմնի շրջանակներում գործելու են անհատույց: Նման կարգավորման նախատեսման համար հիմք է նաև վերը ներկայացված միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը թույլ է տալիս գալ այն հետևությանը, որ նման խորհրդատվական բնույթի եզրակացություններ տվող մարմինների ծանրաբեռնվածությունը տարվա կտրվածքով շատ քիչ է, միջինացված հաշվարկով կարող է կազմել տարեկան մինչև 10 եզրակացության տրամադրում: Այսինքն՝ նոր ձևավորվող խորհրդատվական մարմնի անդամները ամենօրյա աշխատանք կատարելու պարտավորություն չեն ունենալու, ուստի ամսական վարձատրություն սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է: Նշվածով պայմանավորված նաև խորհրդատվական մարմնի դատավորների համար բացակայում է լրացուցիչ վարձատրություն ստանալու, ինչպես նաև դատավորների միջև գործերի բաշխման չափանիշներից նվազեցումներ կատարելու անհրաժեշտությունը (ի տարբերություն մյուս հանձնաժողովների): Նման մարմնի անդամների գործունեությունը նաև կրում է հասարակական բնույթ, և ուղղված է դատավորների՝ էթիկայի և վարքագծի կանոնների հարցերով գաղտնի խորհրդատվություն ստանալու իրավունքի ապահովմանը:

2. Ներկայումս դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է 8 անդամներից, որոնցից ոչ դատավոր անդամների թիվը սահմանափակվում է 2-ով: Արդյունքում, սակայն, դատավոր անդամները, միևնույնն է, ունենում են գերակշիռ մասնակցություն հանձնաժողովի կազմում և դրա որոշումների կայացման ընթացքում:

Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, որը ներկայացվել էր Դատական օրենսգրքի փոփոխությունների նախնական տարբերակի կապակցությամբ և համաձայն որի հանձնաժողովի կազմում նախատեսված էր երեք ոչ դատավոր անդամների ներգրավում, ինչը Վենետիկի հանձնաժողովը ողջունելի էր համարել՝ հանձնաժողովի գործունեությունը արտաքին վերահսկողության/դիտարկման համար առավել բաց դարձնելու տեսանկյունից[14]:

Անհրաժեշտ է ընդգծել նաև այն, որ համանման մոտեցման հիման վրա է գործում նաև Մոլդովայի Հանրապետության «Դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» օրենքը[15], որի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Դատավորների կարգապահական հանձնաժողովը բաղկացած է 4 դատավորից և քաղաքացիական հասարակության 3 ներկայացուցչից: Նշված հարաբերակցության (սկզբնական շրջանում նախատեսված է եղել 5 դատավոր և 4 քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ հարաբերակցությունը) վերաբերյալ իր կարծիքն է արտահայտել նաև Վենետիկի հանձնաժողովը, նշելով, որ նման կազմը ողջունելի է, քանի որ այն կօգնի ապահովել դրա գործունեության թափանցիկությունը, ինչպես նաև համայնքի ներգրավվածությունը կարգապահական վարույթներում՝ միաժամանակ կանխելով դատական կորպորատիվության ռիսկը[16]:

Իր հերթին, 2017 թ.-ի հոկտեմբերին Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքում[17] Վենետիկի հանձնաժողովը ընդգծել է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում կորպորատիվ մոտեցում որդեգրելու ռիսկերը՝ առաջարկելով հանձնաժողովի կազմի հավասարակշռումը ոչ դատավոր անդամների ընդգրկման միջոցով:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է վերանայել դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հանձնաժողովում որոշումների կայացման գործընթացում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը:

3. Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում գործող փաստաբանների ընդգրկման արդյունքում շահերի բախման հնարավոր ռիսկերը նվազեցնելու նպատակով

---

[14] Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն համատեղ թիվ CDL-AD(2019)024 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2019)024-e հղումով:

[15] Տե՛ս, Մոլդովայի Հանրապետության «Դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» օրենքի հղումը՝ https://www.legis.md/cautare/getResults?doc_id=135676&lang=ru#

[16] Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն համատեղ թիվ CDL-AD(2014)006 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)006-e

[17] Վենետիկի հանձնաժողովի թիվ CDL-AD(2017)019 կարծիքը https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)019-e հղումով:

անհրաժեշտ է սահմանափակել Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում գործող փաստաբանների ընդգրկման հնարավորությունը:

4. Դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-6-րդ կետերով նախատեսված են Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացնելիս հերթերը, որոնց են՝ հինգերորդ հերթին՝ թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին՝ ըստ Արդարադատության ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին, վեցերորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին: Մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին, յոթերորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող հավակնորդներին: Մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին:

Այս կարգավորումներից հետևում է, որ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող հավակնորդներին դատավոր նշանակելու համար առաջարկությունը ներկայացվում է ավելի հերթով, քան թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին: Մինչդեռ, հարկ է նկատի ունենալ, որ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդները և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող հավակնորդները ևս ուսուցում են անցնում Արդարադատության ակադեմիայում, հանձնում են նույն քննությունները, ինչը որ 5-րդ հերթով նախատեսված թեկնածուները: Նման պայմաններում վերը նշված երկու հերթերում ընդգրկված թեկնածուներն առանց արդարացի հիմքի դատավոր նշանակելու համար առաջարկությունը ներկայացվում է միայն հինգերորդ հերթի բոլոր թեկնածուներին սպառելուց հետո:

5. Դատական օրենսգրքի կարգավորումները չեն սահմանում հստակ նորմեր Բարձրագույն դատական խորհրդի նախագահ չընտրվելու դեպքում նոր ընտրություն կազմակերպելու ժամկետները և կարգը, ինչը պրակտիկայում տարընթերցումների տեղիք է տալիս:

6. Դատական օրենսգրքում հստակեցման կարիք ունեն նաև այլ դատավարական օրենսգրքերով սահմանված՝ Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների հստակեցման հարցերը, դատավորին՝ ոչ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ ազատությունից զրկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի նախագահին և Գլխավոր դատախազին տեղեկացնելու պարտականության վերաբերող հարցեր, դատավորի և դատական ծառայողի օր նշելու հետ կապված իրավահարաբերություններին վերաբերող հարցերը, Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակին վերաբերող հարցերը:

7. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակի իրավունք ունի առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում: Տվյալ կարգավորումը վերաբերում է ինչպես Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին, այնպես էլ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներին: Այսինքն, ստեղծվում է իրավիճակ, երբ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամները՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրվելուց և պաշտոնավարելու ժամկետն ավարտվելուց հետո շարունակում են պաշտոնավարել որպես դատավոր և ապահովագրված են սոցիալական երաշխիքներով, իսկ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամների դեպքում այդպիսի երաշխիքները բացակայում են:

Ներկայումս «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն անկախ տարիքից Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները ավարտվելու դեպքում Սահմանադրական դատարանի դատավորը ձեռք է բերում ներկայումս «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունք:

Տվյալ կարգավորումը առավելապես պայմանավորված է նրանով, որ Սահմանադրական դատարանի դատավորները ընտրվում են Ազգային ժողովի կողմից և հստակ ունեն պաշտոնավարման ժամկետ, որը կարող է ավարտվել մինչև նրանց կենսաթոշակի տարիքի հասնելը, ուստի նախատեսվել են համապատասխան կարգավորումներ, որոնք թույլ են տալիս մեկ ամբողջ ժամկետով պաշտոնավարած Սահմանադրական դատարանի դատավորին մինչ կենսաթոշակի տարիքի հասնելը իրացնել իր կենսաթոշակի իրավունքը:

Քանի որ նմանատիպ իրավիճակում են գտնվում նաև Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամները, որոնք ընտրվում են պաշտոնավարման որոշակի ժամկետով, առաջանում է անհրաժեշտություն «Պաշտոնատար անձանց գործունեության

ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով նրանց համար համապատասխան կարգավորում նախատեսելու:

8. Ներկայումս Օրենսգրքում առկա կարգավորումների համաձայն Դատավորների ընդհանուր ժողովի ոչ դատավոր անդամների թեկնածուները կարող են ներկայացնել միայն Բարձրագույն դատական խորհրդի սահմանած պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունները, իսկ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման քննությանը կարող են ներկա գտնվել իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների: Նման սահմանափակումը պայմանավորված է նրանով, որ հասարակական կազմակերպությունները իրենց կարգավիճակով ոչ առևտրային կազմակերպություններ են և նրանց գործունեության ուղղությունը սահմանվում է իրենց կանոնադրությամբ:

Քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հիմնադրամը նույնպես համարվում է ոչ առևտրային կազմակերպություն, որը կարող է գործունեություն իրականացնել միայն հանրօգուտ նպատակների շրջանակներում, սակայն Օրենսգրքի կարգավորումների համաձայն նույնիսկ իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հիմնադրամները միայն իրենց կազմակերպահիրավական ձևից ելնելով հնարավորություն չունեն թեկնածուներ առաջադրելու:

Ներկայացվածի շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում Օրենսգրքով հասարակական կազմակերպություններին վերապահված բնագավառներում թեկնածու առաջադրելու իրավասություն վերապահել նաև հիմնադրամներին: Նշվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ներկայացված Նախագծի համաձայն Դատավորների ընդհանուր հանձնաժողովների թիվը ավելանալու է ևս մեկով, որտեղ կարող են ընդգրկվել նաև հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրվող թեկնածուներ, ինչպես նաև լրացվում է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամների թիվը, որի համար թեկնածուներ կարող են ներկայացնել միայն Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող հասարակական կազմակերպությունները, հետևաբար որոշակի պահանջների բավարարող հիմնադրամների կողմից թեկնածուների առաջադրումը կարող է նպաստել Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում նոր թեկնածուների ընդգրկմանը:

2. Նախագծի նպատակը և ակնկալվող արդյունքը.

Նախագծերի նպատակը էթիկայի և կարգապահական հարցերով դատավորին գաղտնի խորհրդատվություն տրամադրելու հնարավորության նախատեսումը և էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշռի բարձրացումն է:

Նախագծերի ընդունման արդյունքում նախատեսվելու են հետևյալ հիմնական փոփոխությունները.

1.Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ձևավորել էթիկայի և վարքագծի կանոնների հարցերով խորհրդատվական հանձնաժողով, որը դատավորներին էթիկայի և վարքագծի կանոնների հարցերով կտրամադրի գաղտնի խորհրդատվություն, այդ թվում տրամադրված խորհրդատվությունների հիման վրա կմշակի և կհրապարակի տեղեկատվական ուղեցույց:

2. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը բարձրացնել 3 ձայնով:

3. Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում փաստաբանի՝ դատավոր չհանդիսացող անդամ ընտրվելը հիմք է նրա փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցնելու համար:

4. Բարձրագույն դատական խորհրդի նախագահ չընտրվելու դեպքում հստակեցվում են նոր ընտրություն կազմակերպելու ժամկետները և կարգը:

5. Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակին վերաբերող կարգավորումները համապատասխանեցվում են Բարձրագույն դատական խորհրդի անդամի սահմանադրական դերին համահունչ անկախության երաշխիքներին, ինչպես դա նախատեսված է Սահմանադրական դատարանի դատավորի դեպքում:

6. «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող և որոշակի ոլորտներում գործունեություն ծավալող հիմնադրամները հնարավորություն կունենան առաջադրելու Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովի ոչ դատավոր անդամի թեկնածուներ, ինչպես նաև դատավորների հավակնորդների թեկնածուների որակավորման քննությանը ներկա գտնվող ներկայացուցիչների:

3. Նախագիծը մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը.

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից:

4. Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.

Նախագծերի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանալու փոփոխություններ կատարելու Ընդհանուր ժողովի հանձնաժողովների գործունեության կարգում:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծերի մշակումը բխում է Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 4-րդ նպատակի 9-րդ գործողությունից, որը նախատեսում է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը բարձրացել է առնվազն 1 ձայնով: